

ՌԻՓԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Tifliser. Redaktsia „Mamak“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ա մ ե ն լ ե գ ու ո վ

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ընթերցասիրութիւնը հայերի մէջ:—Ն երբ ին
տ ե ս ու թ իւ ն: Նամակ վարդիկավազից: Նա-
մակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին
տ ե ս ու թ իւ ն: «Մասիս» թղթակցութիւնը:
Գարեգին վարդապետի նամակը: Անգլիա: Սպա-
նիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:
«Մշակ» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:
Տեղեկացոյց:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՆԻ ՄԵՋ

Բոլոր հայոց պարբերական հրա-
տարակութիւններից «Մշակ» լրա-
գիրը ամենատարածվածն է: Բայց
այնու ամենայնիւ մեր լրագիրը
մինչև այժմ երբեք չէ անցել
900 բաժանորդների թւից:

Այս տարի «Մշակ» բաժա-
նորդագրութիւնը դեռ շարունակ-
վում է, մենք յոյս ունենք որ
տարվայ վերջը կը հասնենք հա-
զարին: Բայց եթէ այդ թւին էլ
հասած լինէինք, միթէ գրանով
հայերը կարող էին պարծենալ:
Ռուսաստանի հայոց ազգաբնա-
կութեան թւին համեմատ հազար
բաժանորդն էլ շատ ողորմելի,
չնչին պրօցէնտ կը լինէր և կա-
պացուցանէր որքան անընթերցա-
ւէր է հայը առհասարակ, մա-
նաւանդ Թիֆլիս քաղաքի հայ
բնակիչները, որտեղ մեր բաժա-
նորդների թիւը այդ անշուշտ պը-
րօցէնտին էլ չէ հասնում....

Ի՞նչ կասէիք, ընթերցող, եթէ
իմանայիք, որ այս ինչ երկրում
բնակիչների իւրաքանչիւր 100
մարդու վրա միայն մի մարդ կար-
գում է լրագիրը, իսկ 99 հոգի
չեն կարդում.... Անշուշտ կասէիք
որ այն երկրի ժողովուրդը տգէտ,
անշարժ, ընթերցանութեան թըշ-
նամի է....

Ինչ կասէք եթէ մենք ձեզ
կասենք որ հայերի վերաբերու-
թեամբ մենք այդ պրօցէնտով էլ
սաստիկ գոհ կը լինէինք, մինչև
անգամ գոհ կը լինէինք եթէ այդ
պրօցէնտի կէսը, քառորդն ունե-
նայինք....

Ռուսաստանում մի միլիօն
հայեր են հաշւում: Ուրեմն եթէ
մեր ազգի իւրաքանչիւր հարիւր
բնակիչների վրա միայն մի մարդ

գրվէր հայոց լրագրին, այդ կը
նշանակէր որ իւրաքանչիւր հինգ
հազար հայ բնակիչների վրա 50
մարդ բաժանորդ գրվէր լրագրին:
Այդ համեմատութեամբ, այսինքն
եթէ 100 մարդու վրա միայն 1
կարդար, իսկ 99 հոգի չը գրվէին,
այնու ամենայնիւ մի միլիօնից
բաղկացած հայ բնակիչների թւից
լրագիրը պէտք է ունենար ուրեմն
տաս հազար բաժանորդ....

Եւ այդ տեսակ ժողովուրդ
այնու ամենայնիւ կարելի էր ծոյլ
տգէտ, անընթերցասէր ունուա-
նել, որովհետեւ իւրաքանչիւր 100
մարդուց մէկ բաժանորդ կունե-
նար լրագիրը....

Ուրեմն ինչ գաղափար պէտք է
ունենանք հայերի վրա, ինչ գա-
ղափար պէտք է կազմի մեր ազ-
գի մասին օտարազգին, եթէ ի-
մանայ որ հարիւր հայերից մի
մարդն էլ չէ կարդում, որովհետեւ
մի միլիօն ռուսաստանցի հայ ժո-
ղովրդից ամենատարածված հայոց
լրագիրը ոչ թէ տաս հազար,
բայց և հինգ հազար, մինչև ան-
գամ երկու հազար բաժանորդն
էլ չունի.... Այլ միայն ինն հա-
րիւր մարդ....

Եթէ օտարազգին կիմանայ որ
Անգլիոյ կաթի գաւառացի հայերի
մէջ իւրաքանչիւր հինգ հազար
հոգու վրա 50 բաժանորդ ունի
հայոց լրագիրը, ուրեմն իւրաքան-
չիւր հարիւր բնակիչի վրա մէկն է
կարդում միայն,—նա անշուշտ կը
ժպտայ, կասի՝ շատ ընթերցասէր
չեն ձեր հայերը: Բայց ի՞նչ կա-
սի նոյն օտարազգին եթէ իմա-
նայ որ Թիֆլիսցի հայերից ոչ
թէ մի հարիւրի վրա մէկ հոգի
է գրված, այլ իւրաքանչիւր երեք
հարիւր բնակիչների թւի վրա
միայն մի հոգի է կարդում, իսկ
ուրեմն երկու հարիւր իննսուն և
ինն մարդ չեն կարդում....

Ահա այն ազգը, որին անուա-
նում են ընթերցասէր և ուսում-
նասէր, ահա մանաւանդ այն
Թիֆլիսցի հայը, որ յանդգնու-
թիւն ունի իր մտաւոր զարգաց-
ման կողմից իրան օրինակ կարծել
ազգի մնացած անդամների:

Բայց Թիֆլիսցին գուցէ կասի
որ օտար լեզուներով է կարդում....

Մենք աներկիւղ դորան կը
պատասխանենք, որ այդ վկայու-
թիւնը սուտ է....

Թիֆլիսցին նոյն կերպով վե-
րաբերվում է և դէպի օտարազգի
գրականութիւնը և լրագրութիւ-
նը, ինչպէս վերաբերվում է դէպի
իր մայրնի գրականութիւնն ու
մամուլը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԻԴՅԱՆԻՑ

16 փետրվարի

Ռուսաստանի հայոց լրագրութեան էջերը այն-
քան նեղ են որ անտեղի կը լինէր լցնել նոցա
մի այնպիսի քաղաքի մանրամասն տեղեկու-
թիւններով, որի բնակչաց հայ տարրը կազ-
մում է փոքրամասնութիւն. այդպիսի քաղաք-
ներից առաւել յարմար է սահմանափակել թըղ-
թակցութիւնները միայն հայ—հասարակութեան
մասին տեղեկութիւններով: Այդպիսի քաղաք-
ների շարքում կարելի է դասել և Վլադիկավ-
կազը:

Այստեղի հայ հասարակութիւնը բաղկացած
է զանազան քաղաքներից գաղթած մշտական և
ժամանակաւոր բնակիչներից: Զանազան քաղ-
աքային մարդիկ Գուշեթից, Թելաւից, Սզնա-
ւից, Թիֆլիսից, Մոզդուլից, Ղազարից և այլ
տեղերից եկել են այստեղ փոշ վատակելու
և գործը յաջող գնալով տեղափոխել են և իրանց
ընտանիքը, այս պատճառով այստեղի հայերի
մեծամասնութիւնը կազմում են վաճառական-
ները և արհեստագործները:

Մեր ամենանշանաւոր և մի և նոյն ժամանակ
պատկառելի յատկութիւնը է անտարբերութիւն
դէպի ազգային գործերը: Ունենք եկեղեցու կից
մի աղայոց ուսումնարան որի լիակատար իշխա-
նը մանկավարժ (?)—ուսուցիչն է. հոգաբարձու-
ների գործն է կարեւոր ժամանակին ձեռք
քաշել քառասունութ-ուսուցիչի ներկայացրած
թուղթը, իսկ զանազան հոգաբարձուի պարտա-
կանութիւնն է իր ժամանակին փողերը վճարել
ու՛մ հարկն է: Իսկ թէ որքան բարեխղճաբար
է կատարում մեր յարգելի ուսուցիչը իր պաշ-
տօնը, միայն կասեմ որ առաւելը պահանջելու
իրաւունք չունենք:

Մեր հոգեբանականութիւնը, այնպէս կորցրել է
հասարակութեան աչքին իր վարկը, որ մինչև
անգամ ընդունակ է դարձել պատճառ լինել
ժողովրդեան եռանդի ստուշելուն: Հայր Մ.-ի
ծայրայեղ անկարգութիւնները մոռացված լի-
նելով արդէն, պատճառ չեմ դառնում յիշեցնե-
լու, իսկ որ հասարակութիւնը տրտնջում է թէ
տէր հայերը և տիրացուները ամբողջ գիշերնե-
րը անց են կացնում թղթախաղով, այդ ևս ու-
րանալ չեմ կարող:

Ժողովուրդը մինչև այժմ տրտնջում էր, որ
ժամասացութիւնը ներդաշնակ չէ: Յաջողի-
ցաւ Ստաւրապոլից տեղափոխել մի նօթաչի (?)
տիրացուն, իսկ նորան ներթափանտալէս ապա-
հովել մեր մաքնեցումն էլ չանցաւ: Վճռեցինք
կամաւոր տուրքով ապահովել նորան, բայց 10
կամ 15 ռուբլին միթէ բաւ է նորապսակ նօթա-
չուն պահել կին, մայր և քոյր և մանաւանդ որ
նա անշուշտ պէտք է մասնակցի ամենայն դե-
պի տիրացու Պ.-ի տանը թուղթ խաղալուն:
Ստիպվեցանք կարգադրել որ նախկին տիրա-

ցուն իր եկամուտը բաժանէ նորի հետ: Այս ա-
մենը անելուց յետոյ մենք մեզ հարցրինք, անը-
դաշնակ է այժմ ժամերգութիւնը, բայց քամ-
բաղդաբար պատասխան ստացանք մեր սիրելի
բացասական «Այո»:

Ահա մի կարճ տեղեկութիւն մեր հայ հասա-
րակութեան հանրածանօթ անձերի մասին:

Առ այժմ վերջացնում եմ նամակս խոստա-
նալով մի ուրիշ յարմար բոլովելու ծանօթացնել
ընթերցողին, ընդհանրապէս մեր քաղաքի միւս
կողմերի հետ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 18 փետրվարի

Պ. Խմբագիր, Թոյլ տուեցէք ինձ դիմել ձեզ
խնդրելով տեղ տալ ձեր լրագրի մէջ հետեւել
յայտնութեանը, որ նկարագրում է մեր այստեղի
բնակիչից մինի կառավարութեան կարգ ու կա-
նօնները:

Այս օրերս ես ներկայացրի Թիֆլիսի առե-
տրական բանկը մի մուրհակ հատման համար և
ինձ մերժվեցաւ: Բանն այն է, որ ես շատ ան-
գամ աւելի մեծ գումարի վեկսեւեր ներկայաց-
րած եմ և եղել նոյն բանկը, և ինձ երբեք մերժած
չեն ընդունել մուրհակներս, որովհետեւ ես միշտ
ճշդութեամբ էի վճարում: Հետաքրքրվելով թէ
ինչ էր ինձ մերժելու պատճառը, ես պատահե-
լով բանկի խորհրդի անդամներից միին, գիմեցի
նրան խնդրելով որ բացատրի ինձ ինչ էր իմ
վեկսելի չընդունելու պատճառը և նա բացատ-
րեց ինձ գործի ամբողջ էութիւնը: Բանկի խոր-
հրդի նիստի ժամանակ, նրա անդամներից միւրը,
Թիֆլիսում յայտնի Նքօր Ավակովիչ Գավիլովի,
որ մասնաւոր կերպով տոկոսներով փողեր փոխ
է տալիս, յայտնեց որ ես նրան չեմ վճարում
600 ռուբլ գումարը, որ պարտ եմ նրան ուրիշի
համար երաշխաւորած լինելով, և այդ պատճա-
ռով խնդրեց խորհուրդը չընդունել իմ նոր ներ-
կայացրած վեկսելը: Խորհուրդը համաձայնեց
նրա հետ: Բանը գրեթե ամբողջ է, որ թէ և պ. Գա-
վիլովի ասածը մասամբ ճշմարիտ է, այսինքն
որ ես նրան չեմ վճարում, բայց դուրս մէջ նա
ինքն է մեղաւոր: Երբ ես նրան պատահեցի ա-
ռետրական բանկում և նա յիշեցրեց ինձ իմ
պարտքս, ես ներկայութեամբ բանկի վարչու-
թեան յայտնեցի, որ ես փողերը կը վճարեմ
հէնց որ պ. Գավիլով յիշեալ վեկսելը զանգառի
կը տայ, որի մասին ես նրան համոզելի կելպով
խնդրում էի:

Նրանց, որոնք նուիրված չեն մեր քաղաքի
ֆինանսական գաղտնիքների մէջ, ես պէտք է
բացատրեմ, որ պ. Գավիլովին, որ առեւտրական
բանկի փողերի վրա սպեկուլացիաներ է անում,
և վերցնում է 30% (ինչպէս նա ինձանից է
վերցրել), հաշիւ չէ որ բանկի մէջ վեկսելների
հատուկներ կատարվէին, որովհետեւ նա շատ
երաւացի կերպով սպասում է որ նոյն կլիէնտ-
ները վերջը նրա օգնութեան են դիմելու:

Բայց որքան վայել է այդ տեսակ պարոնի
ներկայութիւնը բանկի խորհրդի մէջ,—այդ թող-
նում եմ հասարակութեանը գատելու:

Բացի ստրանդի խորհրդի անդամը, որ պատմեց
ինձ այդ ամբողջ պատմութիւնը, աւելացրեց որ
եթէ ես վճարեմ պ. Գավիլովին այն փողերը
որ ես նրան պարտ եմ, իմ վեկսելն էլ իսկույն
կընդունվի բանկի մէջ: Ինչպէս էք հաւա-
նում.... Միթէ ամբողջ խորհուրդը համախոհ է պ.
Գավիլովիի հետ: Հուտով ես յոյս ունեմ յայտնել
իմ կարծիքս պարոնի վրա, որտեղ որ հարկն է,
իսկ եթէ նա ցանկանայ և դատարանի մէջ Գոյո
ունեմ մերկացնելու այնպիսի իրողութիւններ,
որոնք բաւական հեռաքրքրել կը լինեն հասա-
րակութեան համար:

Ընդունեցէք, պ. Խմբագիր, և այլն:

Իշխան Գ. Գ. Էրիստով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԵՏԵՐՍԲՈՐԳԻՑԻ մեզ գրում են, որ համալսարանի տարեգրքին օրը, փետրվարի 8-ին, ուսանողների պարգևատրվածության հանդէսը շատ փառաւոր կերպով կատարվեցաւ: Մի քանի ուսանողներ ոսկեայ մեդալ ստացան և նրանց թուով իրաւաբանական ֆակուլտետի ուսանող մեր հայրենակից, ալեքսանդրապոլսի հայ երիտասարդ, Յակովբ Թադէոսեան Տիգրան և Եսայ:

«Արարատ» ամսագրի անցեալ տարվայ դեկտեմբերի տետրակում հրատարակվեցան Անդրկովկասում գտնվող հայոց թէ՛ արական և թէ՛ իգական ուսումնարանների վիճակագրական տեղեկութիւնները, բայց անդեկովկասեան մէջ յիշված չեն երևանի նահանգի շատ տեղերի և Ալեքսանդրապոլի գաւառի դպրոցները: Իսկ առանց այդ մոռացված դպրոցների յայտնվում է որ ընդամենը Անդրկովկասում հայոց դպրոցների թիւը 105 են, որոնց մէջ ուսում են առնում 5362 երկու սեռի աշակերտներ: Այդ թիւից արական դպրոցները 81 են, նրանց մէջ ուսուցիչների թիւը 194 է, ուսում առնողների թիւը 4146 է: Իգական դպրոցները 24 են, վարժապետների թիւը 130 է, աշակերտուհիների թիւը 1216 է: Այդ բոլոր դպրոցները պահպանվում են ազգի օժանդակութեամբ: Ամադրի մէջ յիշված չեն և Կովկասեան սարերից այն կողմ գտնված հայոց դպրոցները, որինակ Ստաւրոպոլի, Գէրբէնդի, Ղազարի, Մոզդուի մէջ և այլն: Ուրեմն հաստատ կարելի է ասել որ Կովկասում և Անդրկովկասում հայոց երկու սեռի դպրոցների մէջ ուսում առնող աշակերտների թիւը վեց հազարից անց կը լինի:

Մեզ խնդրում են յայտնել որ շաբաթ օր, փետրվարի 24-ին, եթէ եղանակը աջող լինի ՓՕԹԻՑԻ Ուղեւորվելու է Գէպի Մարսէլի «Մեօզ» (Meuse) անունոված ֆրանսիական չորհրդաւոր, որի կապիտանն է պ. Նել (capitaine Nel) և որ պատկանում է Paquet ընկերութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՎԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Սերաստիոյ Կովտուն գիւղին դէմ անցեալներն եղած յարձակման և անոր հետեանայ տխուր պարագաները կը հաղորդէ մեզ հետեւեալ նամակը, զոր առանց մեր կողմանէ աւելորդ խորհրդածութեանց Ս. Պատրիարք Հօր և Վարչութեան ուղարկութեանը կը ներկայացնենք:

Սերաստիայէն երեք ժամ հեռաւորութիւն ունեցող Երկու հարկուր տունէն բաղկացեալ հայաբնակ Կովտուն գիւղն անցեալ ամսոյ քրտան և ութին ցորեկուան ժամը վեցին միջոցները Կարինէն Սերաստիա եկող հանրածանօթ և հռչակաւոր չարադրած Միհր Սլիի արքանեակները դալով՝ երկուր բանակուէ յետ գիւղը պաշարելով Մարթինի և Բէլօյվերի հրազեններով կրակ կը տեղացունեն նոյն միջոցին գիւղին յառաջակները դուր ելլելով՝ նպատակին և իրենցմէ ինչ ուղեւնին իմանալ կուզեն: չարագործք կը պատասխանեն թէ՛ Միհր Սլին կուգայ, դուք դիմաւորելու չէք ելլար, և թէ՛ մեզնի տեղ չէք պատրաստեր: Սորա վերայ գիւղին բէիդ Խընկոյ անձը կը հարցունէ թէ եկողը ինչ կարգի մարդ է, որպէս զի ըստ այնմ տեղ պատրաստենք: Իսկոյն չարագործներէն մին պայկեալ կեպուղարար, եհտի զոալն թանաքը պիւտիլի Միհր Սլի ծիւղի անտէն թիթիւրէյօրը սիւղ թանձրմայօրսունուղը ըսելով կատաղաբար վրան կը յարձակի և իւր Մարթինի հրացանը իսկոյն յիշեալն կուրծքին կը պարպէ և անմիջապէս բէիդը գետին կը տապալն ու հօգին կաւանդէ: Իսկ միւս չարագործք գիւղին մէջ մտնելով իրենց յառաջը եկող Հայերուն դաշոյնի և բէիդու Վերի հարուածներ տալով չարագործ կը վի-

րաւորեն որոնց մին վտանգաւոր է. չարագործք տեսնելով որ յանդուգութեան սահմանը անցած է, հետեւաբար քաղաքն ալ մօտ է, իսկոյն կը պարտաւորին ոմանք իրենց ձիերով և ոմանք ալ իրենց ձիերը և գլխարկներն հոն թողլով կաճապարեն մեկնիլ և ժամ մի հեռու հայաբնակ Կովայ գիւղը երթալով նոյն գիւղերը հոն կանգունեն: Գիւղացիք իրենց բէիդին դիակը և վերաւորեալները ձգելով կը փութան Սերաստիա և երեկոյնան ժամը մէկին եղելութեանը տեղոյս Առաջնորդ Ս. Հօր կը հաղորդեն: Նորին Սրբազնութիւնը ազգասէր անձանց միջոցաւ Վսեմ. կուսակալին կը հաղորդէ: Նորին Վսեմութիւնն ալ իսկոյն օստիկան երթալ կը հրամայէ, այսու ամենայնիւ խեղճ գիւղացիք գիւղերը մինչև ըստ գունէ ի դուռ օստիկան կը մուտն և հազիւ վեց եօթն օստիկանով արշալոյսին գիւղը կուղևորին: Հետեւեալ օրը Գլխաւորը զայնաբար երեւոյնաբար թիւնը իմանալով տեղոյն հալիմը հետը առած Կովտուն կուգայ և պէտք եղած քննութիւնը կատարելով դործին ճշմարտութիւնը անկողնակալ ուղով կը տեղեկագրէ առ կուսակալն: Ետ այնորիկ տեղոյս Մահքէմի շէրիյէն Նայիպ մը և կուսակալութեան բժիշկը Կովտուն կը ձամբուին, որոնց քննութեան արդիւնը գրաւոր կերպիւ Վսեմ. կուսակալին կը տրուի: Հետեւեալ շաբաթ օրը Միհր Սլի իւր արքանեակներով Սերաստիա կը հասնի և Սերաստիայէն առած հրահանգին համաձայն, (ինչպէս յիշատակեցի. այս անձը ոճրագործութեամբ հանրածանօթ լինելով, գրեթէ իւր ամբողջ կեանց մէջ շատ անգամ աւարառութիւն, սպանութիւն և այլն և այլն գործած ու քանի քանի անգամներ բանտարկուած և քննութեան ենթարկուած և այնպիսի գործոց մէջ փորձառութիւն ու հմտութիւն ստացած է) Այս պէկի ներկայութեան քննութիւն կը ըլլայ: քննութեան մէջ իրեն արբանեկաց փախած ժամանակին երեք գլխարկ և երեք ալ ձի չը կրնալով հետ տանիլ, գիւղը ձգած և փախած լինելուն, սոյն ձիոց և գլխարկաց մարդիկը կը պահանջէ գիւղացեացմէ՝ առարկելով թէ, գիւղացիք այս երեք մարդիկներս անյայտ ըրած են: Արժան է յիշատակել թէ այս զրպարտանաց ենթակայ Կովտունի Հայք են, որոնք վերջին պատերազմին ժամանակ էնկիւրիէն, Գոնիայէն և այլ տեղերէ Կարին գնացող հազարաւոր կամաւոր զօրաց հիւրընկալուներն են: ասկից զատ՝ նախորդ կուսակալ Հաճի Իրզէթ փաշայի օրով Սերաստիայէն Կարին և Կարս գիւղում քառասուն յիսուն հազար կանոնաւոր և անկանոն զօրաց ամբողջ սոյն գիւղը հանդիպած, գիւղերներ հոն անցուցած, հայ գաղթի յարգ առած են: Իսկ չունեցած ժամանակին ստակովին գրներով այդ զօրքերը և ձիերին կերակրած են, և այս առթիւ երեք զանգատ մը չը յայտնող Հայ գիւղացեաց վրա իւր փոխարինութիւն՝ այսպիսի զրպարտութիւններ կը տեղան: Ծաւ է ըսել նաև թէ պաշտօնական մարմիններն անգամ սոյն սոսկ զրպարտանաց կարեւորութիւն տալով, և մահմետական անդամներէ բաղկացեալ արտաքոյ կարգի ժողով գումարելով՝ կորոշել որ օստիկանութեան հազարապետը և Թէմիզի հուզուզի անդամներն Սլիթ պարմագ Հիւսէին Էֆէնտին և Տիվանը Թէմիզի բողոքական անդամ Թ. Յարութիւն աղայն, որոնց հետ նաև յիսուն վաթսուն հսկաններ Կովտուն գիւղը երթան, որպէս զի Միհր Սլի պահանջած չորս մարդոց գիւղները խուզարկեն և գտնեն: ասկից կրնայ հետեւողի թէ խեղճ Հայոց բողոքոյն և տեղի ունեցած սպանութեան որ աստիճան կարեւորութիւն արուած է. նա մանաւանդ ոճրագործներուն ոճիրը ծածկելով՝ անմեղներն իւր մեղաւոր ընկել համար որ աստիճանի վատ միջոցներ ձեռք առնուած են, ինչ զարմանալի մեթոտ և դարձուածք: Կա-

րինէն ասդին բազմաթիւ Հայու արիւններ հոսեցուցած և անմեղ դիակներ երկիր տապալեցուցած, և առաւել Սերաստիայու շուրջը գտնուած գիւղերու մէջ ամեն կարգի աւարառութիւնը գործած անձ մը իւր ոճրագործ արբանեակներով հանդերձ քանի մը անձանց պաշտպանութեան շնորհիւ թերևս առանց բանտարկութեան արձակ համարձակ կը շրջն սպառնալով թէ մէկէր ատէմէրիմի պուլմալար իսէ, Կովտուն գաղթեալին աթէշէն եագարմա: Թշուառ գիւղացիք ահ ու դող մէջ սարսափած կը տառապին, և բաւտուգիւ այս վայրենիներէն ամեն չարիք կը յուսացուի, որովհետև պէտք եղած ատեն ոչ օստիկան և ոչ ալ կանոնաւոր զօրք չը դրանաւորն, նոցա համարձակութիւնը աւելի ընդարձակուած է. և արդարեւ առանց օստիկանութեան կուսակալ մի միակ գլխուն ինչ կրնայ գործել: Թիշաակեալ արտաքոյ կարգի ժողովոյն և գիւղը քննութեան զացող անձինքներէն ծագում առնելով Վիտալուրար հերիֆէրի պաթըրմէլար խօսքը ընդհանրացած է. հետեւաբար ինչոյն քննութիւնը դեռ չը սկսած՝ ստուգութեան կերպարանք տրուի կը ջանացուի այս ամբաստանութեան: Այդ ընթացքով կրնան մակաբերել թէ խեղճ Հայերուն դատը ինչ աստիճանի մէջ է, և ուր պիտի յանգի. այժմէն արդարութեան և իրաւանց հազուց կարգաւ աւելորդ չեմ համարիր, վասն զի ասոր նման շատ մը փորձեր տեսած եմ:

Ահաւասիկ անթուծելի ցաւ մ'ալ Թէմիզի Հուզուզի ժողովին մէջ ունեցած Քրիստոնեայ և Հայ կարծեցեալ Փօթուխեան Նազարէթ աղա անդամուս նկատմամբ ունինք. այս անձը թերևս ինքզինք որոշելու դատելու անկարող ըլլալով մինչև անգամ իւրեան մահու և կենաց նկատմամբ պատրաստեալ տեղեկագրի մը իմաստը հասկնալու և ըմբռնելու անկարող ըլլալը կը ստուգեն: Երեւել փօթուխեան ասիէ հինգ ամիս յառաջ հրաժարեալ անդամին տեղ յաջորդեր է, այն օրէն ի վեր Քրիստոնէից դատերը զարմանալի կերպարանք մը առած են. ընդհանուր ազգայինը կը հաստատեն թէ միմիայն իւր փառաց և շահուցը կը ծառայէ և իւր անդամակցաց խնկարկուն է, կարբացուած գրոց մինչև անգամ ինչ ըլլալը չը կրնար հասկնալ և այլն և այլն:

Ի վերջոյ Սերաստիա իւր շուրջը գտնուող վիճակներով հանդերձ պատերազմին սկիզբէն ի վեր կրած նեղութեանց, վշտաց, տառապանաց, պղտութեանց և սպանութեանց չափը անցած լինելով, երբեմն բողոքած և դարձուածքով մը սպառնալար լինելով, լըռիկ մեծիկ առանց ձայն հանելու ժամանակներն կանցունէին: Այս պատճառաւ կը հետեւեալը թէ Սերաստիայ ազգայինը փոքր ի շատէ հանդարտ ու հանդիսա են: Բայց ցաւօք սրտի կը յայտնենք թէ Սերաստիա, որ Փոքր Հայաստանի մէկ մասն է, բարձր հայոց կրած վիշտերէն ու տառապանքէն ոչ նուազ վիշտ ու տառապանք կրած է, բայց և այնպէս իւր ձայն և աղաղակը և արդարացի բողոքները հրապարակ հանելու մասին մինչև ցարդ անհամար արհաւիրք և խռնադոսներ ունեցեր է դժբաղդաբար:

Առ այժմ այսպիսի վերջացելէս յառաջ աւելորդ չեմ համարիր յաւելուլ թէ յիշատակեալ Միհր Սլի հանրածանօթ ասպատակը իւր մարդիկներով հանդերձ Սերաստիայ շրջակայքը բնակութիւն հաստատելու մտօք եկած է. եթէ յաջող (որուն տարակոյս ընել աւելորդ է), երկրին ժողովուրդեան նա մանաւանդ Հայ Ազգայնոց համար ցաւոց և թշուառութեանց նոր դարապուս մը տրուի բացուի, որուն համար ձեր խորհրդածութեամբը հանդերձ ներկայս բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հօր ուղարկութեան յանձնելն իր աղաչելով մտով և այլն:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ

Հետեւեալ նամակն ու ցուցակը գերապատիւ հեղինակին հաճութեամբ մեզ զրկուած լինելով առ ի հրատարակութիւն, կը մաղթենք որ Պօլսոյ զանազան թաղերի նմանին Գաղիկոնի օրինակին, և իրենց հասութիւց մէկ մասն ազգաշէն գործոց նուիրեն:

«Արարատեան ընկերութեան» Տնօրէն Ժողով անդամք սիրեցեալք:

Այդ անունը՝ գոր կը կրէ ընկերութիւնը, պաշտելի է ամեն Հայուն: Զեր անձնուէր ջանքը՝ գոր անձանձիր յառաջ կը տանիք, քաջալերել պարտք մ'է ամեն Հայուն, և ձեր հայրենաշէն նպատակին օժանդակել կենաց և պատուոյ, փրկութեան և երջանկութեան ճանապարհ պատրաստել է Հայաստանին և Հայուն:

Նրջանիկ եմ ես ներկայացուցիչ հանդիսանալով խումբ մը Հայաստանցի պանդուխտ Հայ եղբարց, որ Գաղիկոնի մէջ կը ծառայեն, Մշեցի, Վանցի, Բալուցի, և մեծաւ մասամբ Գրեցի խոհարարք, Մշեցի համալը, և այլն, և թէպէտ կարօտ ու ծառայ, այլ սրտիւ ագիւր և ազատ, իրենց խնդագին զգացմամբ ինձ կը յանձնեն յայտնել ընկերութեան իրենց հոգւոյ հրճուանքն ու գոհունանքը փոքրիկ պատարագաւ մը, գոր իրենց Զակաւներն ու լանջերը ողորդ ջերմ քրտանց կաթիլներէն կը ձօնեն և իրենց ջանքն կընծայեն:

Լսելով թէ «Արարատեան ընկերութիւնը» Արարատոյ որդւոց Հայրենի գաւառաց մէջ ձրի ուսումն և լուսաւորութիւն տարածելու ձեռնարկած է, կը զգան թէ՛ իրենց նշեհ հուշեան սև ճակատագիրը ջնջելու, իրենց թիկանց վրայէն դրստաւան բռն և պարանոցէն ծառայական լուծը թոթուելու, պատուաւոր մարդոց և ազգաց կարգը դատուելու, հայրենեաց և ընտանեաց անդորր վայելել տալու, մթին և խոնավ նկուղներուն մէջը իրենց թափած արցունքն ու հառաչանաց արձագանքն անհետ ընկելու, իրենց բընիկ ընդարձակ դաշտաց և լեռանց վրայ կենաց ազատ շունչը շնչելու: հոգի տալու և աւանելու, իրենց ծնած հողոյն վրայ ապրելու զօրանալու, և զանի զօրայնելու մի միակ միջոցն է ուսանիլ և դիտելու և ահա այս միջոցը ասոնց գաւակաց համար կը պատրաստէ Արարատը:

Գաղթը է ինձ յուսալ թէ հաճութեամբ պիտի ընդունէք զրկանաց, վաշխից, տառապանաց և նոգեհուշեան բռնանց տակ ձրնշուած մեր սիրելի Հայ եղբարց սոյն դուզնաբեայ պատարագը՝ իրենց փղձկեալ սրտի անհոն շնորհակալաց և հայրենասիրական զգացմանց հետ ի ձեռն նոգեհ վարդապետի մը, որ կաթօթէ դարձունել հայրենի իրենց գաւակաց ջով, և որդիքն՝ իրենց հայրենեաց ծոցը: Ծաղոկն երկինք ձեզ և անոնց: Ն. Սրբուհի Ժողով անդամք:

Ահաւասիկ «Արարատեան ընկերութեան» գրած պատասխանը:

Առ գերապատիւ Տէր Գաղիկոնի վարդապետ Սրուանձտանց, ի Գաղիկոն: Սիրեցեալ Հայր: Արարատեան ընդունեցանք ձեր յուշարար 16 ամաթիւ նամակն և այն նուէրներն, զոր Գաղիկոնի մեր պանդուխտ եղբարք «Արարատեան» գանձանակը ընկելով՝ կուզան մասնակցել հայրենի աշխարհի մէջ լոյս ծաւալելու գործոյն:

Այդ լուսնայն արեւնք քրտանց տարաբաղդ Հայ պանդուխտին, որ իւր ընտանեաց օրապահիկն հոգալու հազիւ կարող է, միթիւ թարիչ ապացոյց մ'է թէ ազգային դատարարութեան աշխատելու պէտքն զգալի եղած է Հայ ժողովուրդեան ամեն խաւերուն մէջ:

Նուիրական պարագ մը կը համարինք

ՌՈՒՄԱՅՑ ԹԵՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՅՑՆԵՐ Նոր ստացվեցան 10000 Ֆուռնո Ֆուռնայի և Կեախտի Թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 Կ. մինչև 8 ր. Ֆուռնայի Ֆուռնայի Թէյի Համար ինձանից գնողներին շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներին նոյնպէս ստանալ: Մակընդամ է մեծ քանակութեամբ և փոքր: Փոստայի ծախսը ինձ վրա ամենում եմ Հասցեն Միքայէլեան կամուրջ, Кавказъ-խմբադրատան տակ: Վաճառական Ա. Պօլստոխին:

3-10

ПОСТУПИЛА ВЪ ПРОДАЖУ КНИГА
ШАРАКАНЪ (ՇԻՐԱԿԱՆ)

Богослужебные Каноны и Пѣсни армянской
восточной церкви, переводъ съ древне-армян-
скаго языка Н. Эмина.

Москва. 1879. Цѣна съ пересылкою 3 р. 50
к. Выписывать можно отъ переводчика, живу-
щаго въ Москвѣ, близъ Красныхъ Воротъ, домъ
Филитиса.

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՆԻ
ՊԵՏՐՈՍԻ ՀԵՂՈՒՍՏՆԵ-
ՐԻ ԽՆԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԵ-
ՆԵԱՆ ՀՐԵՊԵՐԵԿԻ ՎՐԵ
ստացվել են մեծ քանակությամբ ՁԲԱԿԻ ՆԻ
ՏՐԻԿՈՒ ՍԻՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական
ԱՌԱՌՈՏԵԱՆ ԺՕՎԵՏՆԵՐ, մեռած ՊԱՏՈՆԵՐ Ե
ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հազուադեպ, ՎԵ-
ՐԱՐԿՈՒ—ԽԱՆԱՏՆԵՐ զարգերով, նոյնպես ըն-
դունվում են ՊԱՏՈՒԷՐԻՆԻ գեներալական
քաղաքական հազուադեպի համար: Յոյս ու-
նեմ, որ ինչպես պատուիրողները նոյնպես է
գնողները ԲԱՆԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

36-75

MAISON DE COMMISSION
et d'exportation
NICOLAS AMIRAGOFF ET C.^o
16, Rue de la Grange-Batelière
PARIS

Կոմիսիոներական տուն ՓԱՐԻԶՈՒՄ՝
Գրադրութիւն ՎԵՑ լեզուներով:
Նիկողայոս ԱՄԻՐԱԶԵԱՆՑ

ՕՐԴՈՒԲԱԹՈՒՄ *մետաքսայ գոր-*
ծարանների տէր ԿԱՐԱՊԵՏ Բարադյանցը *կա-*
մենում է մի տնային ՎԱՐԺՈՒՀԻ (губернаниш-
ка) *իր մանկանց համար:*

Պայմանների մասին հարցնել «Մշակի»
խմբագրատանը:

2-3

Особа, КОНЧИВШАЯ С. ПЕТЕР-
БУРГСКИЕ ПЕДАГОГИЧЕСКИЕ КУР-
СЫ (теоретическіе и практическіе), да-
етъ уроки по всѣмъ предметамъ гимна-
зическаго курса и по новѣйшимъ язы-
камъ. Готовитъ къ экзамену Домашней
Учительницы. Просить обращаться въ
контору газетнаго агентства Шавердова.

ՄԻ օջիւրդ, ՈՐ ԻՒՐ ՌՈՍՈՒՄԸ ԱՆԱՐՏՆԸ
Է ՊԵՏՏԵՐՈՒՐԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՒ
ՅՈՒՄ (տեսական և դորճեական), ընդունում է
իւր վրա գինեագեական կուրսի դասեր ամեն
աաարկաներից, նշոյպէս և նոր լեզունքից:
Պատրաստում է նշոյպէս քննութեան «տալին
վարժապետահօլթեան» պաշտօնին: Դիմել
«Տալիքդեանի լրագրական գործակալութեան
կանաւորին»:

ԿՐՈՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԳԻՇԵՐԹՈՒԿ ԵՒ
ԵՐԹԵՒԵԿ ՎԿԱՏՐԱՍՏՈՒԸ ԵՐԵՎԱՆԵՐԿՆ ՄԻՋ-
ՆԱԿԱՐԳ ԲՈՂՈՒՄՆԱՐԱՆԵՐԿ ԳՈՒԳՐ
ԴԱՍԱՏՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ՃԱՇՆՑ 86-
ՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՄ ԵՆ ԼԻՆՈՒՄ: Ֆրան-
սիերէն և գերմաներէն լեզուների զործա-
կան և աշօրեաիական զասեր են տրվում:
Ուսումնարանը գտնվում է Վօրսնցօվսկայա
Նաբերեժնայա փողոցի վրա, Բեռլանվի նախ-
կին տանը, № 19.

2-3

Բժիշկ Աւետիք Բաբայան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին թիֆլիսի բժշկանոցում հորեքաբեթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջրալին և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլ ինքնաբանութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցեն Սերգիսեկանայա փողոց, տուն Բալանդուրովի։

3-10

„ՄԵԼԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՍԻՐՔ

1879 1879

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՒ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետև.
Լեւոյ օրերից:

Լրագրի զիջքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԼԿԸՆ ՀԵՌԵԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան զինք 10 բուլլ է, կես տարեկանը 6 բուլլը: Գովել կարելի է ՄԻԱՅՆ ԽՐԱԳՐԱՏԱՆ, մէջ:

ՄԱՆՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր:
Օտար քաղաքներից պետք է գիմնել հետևեալ հասցեով՝ ТИФ-
ЛИСЪ Редакція «Иправъ».

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ՔԱՐԱՆՈՒԽ «ԴՈՒՍԱՆԱՆ» ԴԼԾՏԻՅ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆԵԼՈՒՄ Է ԶԷԼՈՑԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՐԱՆ

ԸՆԿ. ՆԱԶԱՐԵՆ-ՇԵՆՈՒՅԻ

Փախույթ է Շէօնիսիի ՊՎԻԼԻՈՆԻՄ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂԶ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷԶ ԳՏԵՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԷԷ

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Մ Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

Աշակերանների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879
Թուականի:

Մանկական պարտեզը ընդունվում են մանուկներ, երիւ սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները:

Ուսման ընթացքը յարմարեցնած է միւս զպրօցանքի ընթացքին, այնպէս որ զպրօցում աւարտողները կարող են մտնել տղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրնորգաց զպրօցի առաջին դասատուները:

Պարտեզն ու դպրոցը զանելում են վերհասնել սկի լիորոցում Իշխան Ե. Ամատունու տանը. №—11:

ՔՆՏՐՎԱՐԻ 22.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ. 1879.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		Բ.	Կ.	ՀՆՈՒԱԳԻՐ	ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՂԻ	ՓՕՍՏ	ԲՈՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
(Փետրվարի 21-ին)								
Ոսկին (պոլտիսկի բիւլը)		8	58	կողմասի և Ան-	Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպե առաւօտեան: Մինչև Միսայլովօ (յաւազ գնացքը) երեկոյան 5 ժամ. 13 րոպե:	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը նաւա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյան:	Հիւանդների ընդունելու- թիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ: Երկուշաբթի. Լիսի- ցեվ և Գորալեվի ներքին հիւանդութիւններ, Բակոտ վնեերական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուշ- կան և կանանց հիւան- դութիւններ:	—